բիներում բոլորովին կտրված լինելով Անդրկովկասից, սկսեց աւելի քիչ բան հասկանալ Անդրկովկասում տեղի ունեցած անցքերից, առաւել ևս Անդրկովկասի ծայրամաս Հայաստանից: Բացի դրանից, անհեթեթ գաղափար ունէին կազմած և նրա դերի մասին, վերջին տարիներս, նոյնիսկ խորհրդային կառավարութեան պատասխանատու ներկայացուցիչները:

Ինչ վերաբերւում է հայ կոմունիստներին, դրանց մի մասը Հայաստանից կտրված լինելու պատճառով նոյնպէս ոչ մի տեղեկութիւն չունէր Հայաստանի ու նրա ազգաբնակութեան ծանր կացութեան մասին, իսկ միւսներն էլ դէպի Դաշնակցութիւնը ւաղած ատելութիւնից կուրացած՝ դիտաւորեալ չափազանցրած միտումաւոր լուրեր էին տարածում ի վնաս հարազատ երկրի: Առանձնապէս այդ ուղղութեամբ ոյժ էին տալիս Բաքուի, Վլադիկաւկազի, Ռոստովի և այլ դաւառական քաղաքների հայ կոմունիստները: Պատւիրակութիւնը ստիպւած էր շատ ժամանակ և աշխատանք վատնել, որպէսզի ցրի Հայաստանի ու հայ ժողովրդի վրա հիւսւած այդ ստերի ու բամբասանքների պատմութիւնը:

Հայերի և հայ կոմունիստների մէջ կարդացած մի շարք զեկուցումներից, տեղական թերթերում տւած մի շարք յօդւածներից ու պաշտօնական զեկուցումներից յետոյ, պատւիրակութեան յաջողւեց նպաստաւոր տրամադրութիւն ստեղծել Մոսկւայի հասարակական ու կառավարական շրջաններում և բռնել իսկական բոյնը այն բոլոր ստերի, որ այնքան անպատկառօրէն տարածել են կոմունիստ կոչեցեալ թուրքերն ու թաթարները՝ ռուս հասարակութիւնը մոլորեցնելու համար՝ նպատակ ունենալով ռուսական կարմիր բանակի օգնութեամբ իրագործել իրենց հակահայկական ծրագրները: Այդ ծրագրները իրագործելու համար, ինչպէս յայտնի է, Բաքուի թաթարները սկզբում խորհրդային իշխանութիւն մտցրին Բաքւում. յայտարարելով իրենց բոլշևիկներ՝ Սուլթանովներն ու նրանց ընկերները ռուսական կարմիր բանակի անւան տակ իրենց թաթարական ասկեարներից կազմւած գնդեր մտցրին Ղարաբաղի խորքերը՝ բնաջնջելու համար հայ գիւղացիութիւնը, շարունակելով այն քաղաքականութիւնը, որ այնքան փայլուն կերպով սկսւած էր նախ քան բոլշևիկների գալը մուսաւաթական կառավարութեան կողմից»:*)

---

*) Իսկ թէ Մոսկւայում Երզնկեանն ու Փիրումեանը իրենք ի՞նչպէս են ներկայացրել Հայաստանը կամ ի՞նչպէս կատարել իրենց վրա դրւած պարտականութիւնը Ղարաբաղի վերաբերմամբ, երևում է «Մշակ»-ի № 14 և 16-ում տպւած «Ի՞նչպէս պաշտպանեցին Ղարաբաղի շահերը» յօդւածից: Արտագրենք հետևեալ կտորը. «Մի-երկու ամիս առաջ Ղարաբաղի կոմիտէն յանձնարարում է Ար. Երզնկեանին և Սիմ. Փիրումեանին գնալ Մոսկւա և պաշտպանել խորհրդային կառավարութեան առաջ Ղարաբաղի հայութեան շահերը: Թէ ի՞նչպէս են կատարել Երզնկեանը և Փիրումեանը իրենց տրւած յանձնարարութիւնը, ցոյց է տալիս նրանց կողմից խորհրդային իշխանութեան ներկայացւած և թարգմանելու արժանի զեկուցագիրը: Նրա մէջ՝ Երզնկեանը և Փիրումեանը խեղաթիւրելով պատմական փաստերը՝ կաշւից դուրս են գալիս ապացուցելու, որ այս երկու-երեք տարւայ ընթացքում Ղարաբաղը կուել է մեծամասնական գաղափարների համար, սպասել է մեծամասնականներին և ոչ թէ գլխաւորապէս արիւն է թափել արիւնռուչ Ադրբէջանից ազատւելու և Հայաստանին միանալու համար: Արտակարգ հետաքրքրութիւն և ուշադրութիւն է գրաւում այդ զեկուցագրի մէջ արտայայտւած այն միտքը, թէ Ղարաբաղի հայ գիւղացիութիւնը իր «եօթը համաձայնութիւններում, զէնքը ձեռքին պաշտպանել է իր հողն ու ինքնորոշման իրաւունքը՝ համարելով վատթարագոյն դէպքում աւելի ընդունելի միանալ մանր բուրժուական Հայաստանին, քան բուրժուական-կալւածատիրական Ադրբէջանին»: Դուրս է գալիս, որ Ղարաբաղի հայ գիւղացիութեան համար չարիք է իր երկիրը Հայաստանին միացնելը»...